## ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

### Կնավաճառութիւնը Կախ-ւանում

Կ ա խ - ւ ա ն, 8 ապրիլ

Դեռ սրանից երկու ամիս առաջ հասարակութեան խօսակցութեան նիւթ էին երկու դեռահաս աղջիկներ, որոնց գնել էր մի Նուխեցի մ՚իկիտանչի և, բերելով Կախ-ւան, սակարկութեան մէջ էր մտել տեղական վրացիների հետ և վաճառել նրանց 100 և 150 րուբլով։ Տեղական վրացիները, որոնց Ենգիլօյներ են անուանում և որոնք ամենամեծ համայնքն են կազմում Թուրքերի և հայերի մէջ, իրանց վարք ու բարքով ոչնչով չեն տարբերվում Թուրքերից։ Ճշմարիտ է, քրիստոնեաներ են, բայց ամենաաննշան առիթն անգամ բաւական է, որ մտնեն մահմեդականութեան գիրկը։ Այս պայմաններում հասկանալի է, թէ կառավարութիւնը ինչպիսի փայփայանքներով և դիւրութիւններ տալով կարողանում է իբրև քրիստոնեայ պահել, թէև անջատումներ յաճախ պատահում են

Մի ժամանակ մահմեդականներ լինելով, այժմ հեշտութեամբ չեն կարողանում բաժան-

...

նիկ օրեր է սպասում իրան վերին ատեան բերդ և տգէտ Ենգիլօյի տանը, բայց անցնում է մի որոշ ժամանակ և ահա նա կանգնած է անդունդի ծայրին. ուժից վեր աշխատանքը, անհամեմատ աւելի կոպիտ վերաբերմունքը և վատ ապրուստը մահվան ճանապարհ են հարթում խեղճ ստրկուհու համար։

Ա. Ղ.

### Սասնիկ ձմեռվայ հետեւանքը

Ղ ա լ ա չ ա, 14 ապրիլ

Երկունքի մէջ է գիւղացիութիւնը. ձմեռը շատ երկարեց, տևեց 7 ամիս, որից առաջացաւ անասունների սով. խոտի և յարդի սայլը 30 րուբլի դարձան, վերջը սկսեցին ջուալներով ծախել՝ իւրաքանչիւրը 60—70 կոպ., այս էլ սպառվեց։ Գիւղերում մի բուռ դարման ու խոտ չէր ճարվում, տաւարն սկսեց սովից կոտորվել, շատ մարդիկ բոլորովին դատարկվեցին. եթէ երկաթուղով Կարսի կողմից խոտ ու յարդ չը բերվէր, մի հատ կով ու գոմէշ չէր մնայ։ Շիրակի գիւղերում, որոնք ոչխարապահութեան կողմից առաջին տեղն են գրաւում

...

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

✦ Թիֆլիսի քաղաքային ինքնավարութիւնը կովկասեան բարձր իշխանութեան առաջ միջնորդութիւն յարուցեց թոյլ տալու Թիֆլիսում գումարել քաղաքային ինքնավարութիւնների համակովկասեան համագումար մայիսի 8—10։

✦ Քաղաքագլուխ Խատիսեան ապրիլի 14-ին Կովկասի Փոխարքային հերթական գործերի մասին զեկուցելուց յետոյ՝ խնդրեց կոմսին և կոմսուհուն պատուել իրանց ներկայութեամբ ապրիլի 23-ին Մուխրանեան կամուրջի բացումը։ Կոմսը և կոմսուհին յօժարութեամբ համաձայնեցին։

✦ Ինչպէս հաղորդել էինք, ապրիլի 20-ին ամբողջ Ռուսաստանում, ինչպէս նաև Թիֆլիսում, տեղի կունենայ այսպէս կոչված

...

## ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

✦ Անցեալ օր Թիֆլիսում վախճանված Պաւլ Շաղինեանը, անզաւակ, իր ամբողջ կարողութիւնը կտակել է բարեգործական նպատակների, այն է՝ 1) 50,000 րուբլի կովկասեան ապագայ համալսարանին, 2) 5,000 ր. Ներսիսեան դպրոցին, 3) 5,000 ր. արհեստաւորաց դպրոցին, 4) 5,000 ր. առևտրական դպրոցին, 5) 5,000 ր. էժանագին ճաշարանին և Մնոգեան տօներին չքաւորներին բաժանելու, 6) 5,000 ր. աղքատ հարսնացուների օժիտի համար առանց կրօնի խտրութեան, իսկ մնացածը իր ազգականներին։ Ամբողջ կարողութիւնը հաշվում է 300,000 ր.։ Բոլոր նուէրները արված են յանուն իր եղբայր Պետրոսի։

✦ Հանգուցեալ Ստասիւլեվիչի թղթերի մէջ գտնվել են 10,000 նամակ՝ Տուրգենեվի, Գօնչարօվի, Պօբեդօնօսցեվի, Սալտիկօվի, Սպասօվիչի, Վ. Սօլօվիևվի և այլոց։

✦ Հիւսիսային Ամերիկայի մի բամբակագործական և թղթագործական տրեստի պետ կապիտալիստ Ջէմս Պատտէն իր ամբողջ կարողութիւնը՝ 90 միլիօն րուբլի՝ նուիրել է բացառապէս թոքախտի դէմ կռւելու գործի համար։

✦ Ժողովրդական լուսաւորութեան մինիստր Կասսօյի շրջաբերականի հիման վրա մօտ 2000 ուսանողներ կարող են արձակվել համալսարանից այդտեղ մնալու համար սահմանված ժամանակամիջոցը անցկացրած լինելուն համար։

## ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՊԵՏ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

15 ապրիլ

ՕԴԵՍՍԱ։ Երէկ ռուս-ասիական բանկային գրասենեակում փորձ արվեց գողացված պահեստատանդորրագրով կեղծ ստորագրութեամբ ստանալ 10,504 ր.։ Փորձ անողները անյայտացան, նկատելով որ բաժանմունքի կառավարիչը ճշդում է ստորագրութիւնները։

ԿԻԵՎ։ Պօլիտեխնիկումի ուսանողները որոշեցին վերջացնել անհետևանք գործադուլը։

ՏՕՄՍԿ։ Վարարումը վերջացաւ։ Սառցահոսանքը շարունակվում է։

ՕԴԵՍՍԱ։ Ապրիլի 28-ին բացվում է ռուս-իտալական առևտրական հաստատութեան բաժանմունքը։

ՄՈՒԿԴԷՆ։ Չինական իշխանութիւնների հրաւէրով Գուչկօվը այցելեց բժիշկների խորհրդակցական ժողովը։

ՊԱՐԻԶ։ Հավասին Տանժէրից հաղորդում են, որ Բրեմօնը վախճանվել է։ Լուրը ստուգել անհնար է։

ՑԻՑԻԿԱՐ։ Մուկդէնի գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ նահանգի խորհրդակցական կօմիտէն որոշեց կրկնապատկել մագեղէնի առևտրականներից առնվող տուրքը շենշանտին նոր քաղաքային դատարանների պահպանութեան միջոցները ուժեղացնելու նպատակով։

ԹԻՖԼԻՍ։ Կովկասեան ուսումնական շրջանի հոգաբարձուն Հաէնոսի նահանգից պահանջել է 300,000 ուռենու պատուաստման ճիւղեր։ Ներկայումս յատուկ ինստրուկտօրի ղեկավարութեամբ կատարվում է անդրկովկասեան 72 դպրոցներում ուռենիների տնկումը։

ՊԱՐԻԶ։ Կառավարութիւնը կարծում է, որ Բրեմօնի մահվան լուրը ճիշդ չէ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բօլգար էկսկուրսանտները Ցարսկօէ Սէլօյում դիտեցին Մեծ պալատը։ Հիւրերին առաջարկված նախաճաշի ժամանակ էկսկուրսիայի ներկայացուցիչ Պանչեվը բաժակ առաջարկեց Կայսրի առողջութեան համար։ Էկսկուրսանտները երգեցին ռուսական օրհներգը։ Էկսկուրսանտները վերադարձան Պետերբուրգ։

Տեխնիքական-շինարարական կօմիտէտը նոր կանոններ մշակեց կինեմատօգրաֆներ պահելու համար։

Գրաւվեց «Нов. Жизнь» թերթի ապրիլի համարը. խմբագիրը ենթարկվում է պատասխանատուութեան 1001-դ և 1034-րդ յօդուածներով։

Աւագ շաբաթից սկսած քաղաքային հիւանդանոցները տարվեցին 17 մարդ խոլերայի կասկածելի նշաններով։ Բակտերիօլօգիական քննութիւնը դեռ չէ աւարտված։ Երկու մահացութեան դէպքերը բոլորովին այլ պատճառներից էին։ Թէև երկիւղ չը կայ, այնուամենայնիւ ձեռք են առնված մի շարք միջոցներ։

ՄՕՍԿՎԱ։ Տօնվեց ռուս բժիշկների 50-ամեակը։ Առ ոտս Կայսրի արկանվեցին հպատակութեան զգացմունքներ։ Ստացվել են շատ շնորհաւորանքներ։

Պահնորդական բաժանմունքը երևան հանեց ռուս սօցիալիստ-յեղափոխականների նոր կազմակերպութիւն։

ՍՈՒԽՈՒՄ։ Քաղաքային դուման միջնորդում է բաց թողնել պետական գանձարանից 10,000 րուբլի՝ բծաւոր տիֆի դէմ կռւելու համար։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

